ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմի պաշտոնական այցի վերաբերյալ

/Տնտեսագիտության և կառավարման ամբիոն/

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Գիտակրթական միջազգային կենտրոնի «Տնտեսագիտություն և կառավարում» ամբիոնի վարիչ Կարեն Սարգսյանս, ամբիոնի դասախոսներ Նարինե Մանուկյանն ու Արամ Սիմոնյանը, ուսումնական մասի պետ Երջանիկ Զարգարյանը և որակի ապահովման բաժնի ղեկավար Նարինե Վարդանյանը, Եվրոմիության Էրազմուս+ KA 107 ծրագրի շրջանակներում 2018 թվականի ապրիլի 22-28-ը պաշտոնական այցով գործուղվել էինք Իտալիայի Տուշայի համալսարան:

Այցի շրջանակներում ունեցա բազմաթիվ գործնական հանդիպումներ, մասնավորապես Տուշայի համալսարանի «Տնտեսագիտություն, ինժեներիա, հասարակություն և բիզնես» ամբիոնի միջազգային համագործակցության պատասխանատու պրոֆեսոր Ջակոմո Բրանկայի հետ, որի շրջանակներում ներկայացրեցի ամբիոնի կողմից իրականացվող մագիստրոսական կրթական ծրագրերը, քննարկվեցին հետագա համագործակցության հեռանկարները, այդ թվում՝ նաև կրկնակի դիպլոմի շնորհմամբ համատեղ կրթական ծրագրի մշակման մասով: Այցի ընթացքում հանդիպումներ ունեցա նաև պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, քննարկվեցին դասավանդման և գիտական հրապարակումների հետ կապված, ինչպես նաև Տուշայի համալսարանում սովորող ԳԿՄԿ ուսանողների ուսումնական գործընթացին մասնակցության հետ կապված հարցեր:

Տուշայի համալսարանի փորձը համարելով խիստ ուսանելի՝ մեր առաջարկով ԳԿՄԿ պատվիրակությանը տրամադրվեց Տուշայի համալսարանի կրթական ծրագրերը, որոնց հիման վրա կիրականացվի բենչմարքինգ, որի արդյունքները հետագայում կներկայացվեն և կքննարկվեն ամբիոնում և Կենտրոնի ուսումնական մասում:

2018 թվականի մայիսի 24-ին ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ նիստերի դահլիճում «Տնտեսագիտություն և կառավարում» ամբիոնի դասախոսական կազմին և ԳԿՄԿ վարչական ստորաբաժանումների

ղեկավարներին ներկայացվեցին գործուղման մանրամասները՝ պատրաստած տեսաշարի միջոցով:

Կարեն Սարգսյան

Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի վարիչ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

31.05.2018 թ.